ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2022-2024թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (հունվար ամսվա վերջի դրությամբ)









2024թ հունվարի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 812,8 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.4%-ով, 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 13.9 %-ով, իսկ 2022 թվականի հունվարի 31-ի նկատմամբ՝ 7.4 %-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 594.6 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2023 թվականի դեկտեմբերի 31-ի նկատմամբ, 0.5%-ով, 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 14.8 %-ով, իսկ 2022 թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 8 %-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 218.2 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.2%-ով, 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 2.5%-ով, իսկ 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 3,9 %-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 11 մլրդ 914.1 մլն ԱՄՆ դոլար աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.6%-ով, 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 11,6%-ով, իսկ 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 28.3%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 11 մլրդ 373.9 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝0.7 %-ով, 2023 թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 12.5 %-ով, իսկ 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 29.1 %-ով,

6)ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 540.1 մլն. ԱՄՆ դոլար նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.9%-ով, 2023թ հունվարի 31-ի նկատմամբ 4.4 %-ով, իսկ 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ նվազելով 14.8 %-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 391.7 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.7%-ով, 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ աճելով 2.2 %-ով, իսկ 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ նվազելով՝ 19.9 %-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 202,9 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.8, %-ով, 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 32.5%-ով, իսկ 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 73.8 %-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 218.2 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.2%-ով, 2023թ. հոնվարի 31-ի նկատմամբ 2.5 %-ով, իսկ 2022թ.հունվարի 31-ի նկատմամբ՝ 3.9%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 920,7 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.5 %-ով, 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 0.2 %-ով, իսկ 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 4.3%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 453.3 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.%-ով, 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 29.9 %-ով, իսկ 2022թ հունվարի 31-ի նկատմամբ՝ 122 %-ով,

12) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 540.1 մլն ԱՄՆ դոլար նվազելով՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.9 %-ով, 2023թ. հունվարի 31-ի նկատմամբ 4.4 %-ով, իսկ 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 14.8 %-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2024թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 4484 մլն ԱՄՆդոլար նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.1 %-ով, 2023թ.-ի հունվար 31-ի նկատմամբ 1.1 %-ով, իսկ 2022 թ-ի հունվարի 31-ի նկատմամբ՝ 0.5%-ով:

2024թ. հունվարի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 79.45%, ինչը ավել է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.31 տոկոսային կետով, 2023թ. հունվարի 31-ի ցուցանիշից՝ 1.79 տոկոսային կետով, 2022թ. հունվարի 31-ի ցուցանիշից՝1.89 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 20.29 %, ինչը պակաս է 2023թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 0.3 տոկոսային կետով, 2023թ. հունվարի 31-ի համեմատությամբ՝ 1,74 տոկոսային կետով, իսկ 2022 թ, հունվարի 31-ի համեմատությամբ՝ 1.78տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.26 %, ինչը 0,01 տոկոսային կետով պակաս է 2023 դեկտեմբերի 31-ի ցուցանիշից, 2023թ.հունվարի 31-ի ցուցանիշից՝ 0.04 տոկոսային կետով, իսկ 2022թ. հունվարի 31-ի ցուցանիշից 0.11 տոկոսային կետով:

2024թ. հունվարի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 8.33 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.59 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 0.64.մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 1.01 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.38 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 0.23 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 7.32 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.38 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 0.23 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2024թ. հունվարի 31-ին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 41.19 մլրդ դրամ, ինչը ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 42.56 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 16.73 մլրդ դրամով:

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 46.00 մլրդ դրամ, ինչը ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 41.89 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 15.91 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -4.81 մլրդ դրամ, ինչը պակաս է 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ -0.67 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է -0.82 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2024թ. հունվարի 31-ին

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 4.51 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 4.9%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 32.3 %-ով,

2) արտաքին վարկերի մարման նպատակով վճարվել է 14.47 մլն դոլարի մայր գումար, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.2 %-ով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 4.8 %-ով,

3) ստացվել են 2.74. մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 182.5 %-ով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է՝ 25.7 %-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման և մարման նպատակով վճարվել է 18.98 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2023. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1.3 %-ով, իսկ 2022 թ, նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 10.2 %-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2024թ. հունվարի 31 դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 2 տրիլիոն 141.7 մլրդ դրամ, ինչը 2023 թ. դեկտեմբերի 31-ի, 2023թ. հունվարի 31-ի և 2022թ. հունվարի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 48.8, 640.3 և 896.4 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 2915 օր, ինչը 2024թ. հունվարի 31-ի համեմատությամբ պակաս է 17 օրով, 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 289 օրով, իսկ 2022թ. հունվարի 31-ի համեմատությամբ պակաս է 258 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2024 թ.հունվարի 31-ի դրությամբ կազմել է 7.11%, ինչը 2023թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.09 տոկոսային կետով 2023թ. հունվարի 31-ի համեմատությամբ ավել է 0.84 տոկոսային կետով, իսկ 2022թ. հունվարի 31-ի համեմատությամբ ավել է 2.37 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2024թ. հունվարի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 2.84 %, ինչը հավասար է 2023թ.դեկտեմբերի 31-ի ցուցանիշին, 2023թ. հունվարի 31-ի և 2022թ. հունվարի 31-ի համեմատությամբ համապատասխանաբար մեծ է 0.2 և 1.78 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 15.91 %, ինչը 2023թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0.08 տոկոսային կետով, 2023թ. հունվարի 31-ի համեմատությամբ՝ մեծ է 2.97 տոկոսային կետով, իսկ 2022թ. հունվարի 31-ի համեմատությամբ՝ 7.01 տոկոսային կետով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 81.25 %, ինչը 2023թ դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 0.08 տոկոսային կետով, 2023թ. հունվարի 31-ի համեմատությամբ փոքր՝ 3.17 տոկոսային կետով, իսկ 2022թ. 31-ի համեմատությամբ՝ 8.79 տոկոսային կետով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2026 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2022-2024թթ. հունվար ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2024-2026 թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 7-10 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2024թ հուվարի 31-ի դրությամբ կազմել է 7.3 տարի: Այս ցուցանիշը 2023 թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.4 տարով, իսկ 2022թ. հունվարի 31-ի ցուցանիշից՝ 1.1 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2024թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է 11.5 %, որը 2023թ. հունվարի 31-ի մակարդակից փոքր է 1.5 և 2022թ. հունվարի 31-ի մակարդակներից մեծ և 2.15 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2024թ.հունվարի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 84.3 %, լողացող տոկոսադրույքով՝ 15.7%: Ընդ որում, 2024թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2023թ. հունվարի 31-ի ցուցանիշից ավել է 0.8 տոկոսային կետով, իսկ 2022թ. հունվարի 31-ի ցուցանիշից՝ ավել է 1.3 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 40 %, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2024թ. հունվարի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 52 %, ներքին պարտք՝ 48 %: Ընդ որում, 2024 թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2023թ. հունվարի 31-ի և 2022թ. հունվարի 31-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 6,5 և 18.2 տոկոսային կետերով: